ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Դուշանբե (Տաջիկստան)
2019 թվականի սեպտեմբերի 17-19-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ԱՊՀ գործադիր կոմիտե

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների մշակութային համագործակցության հարցերով խորհրդի հերթական նիստին:

Նիստի ընթացքում քննարկվել են ԱՊՀ մասնակից պետությունների համաձայնեցված մշակութային քաղաքականության վարմանը, 2021-2025 թվականների հիմնական միջոցառումներին վերաբերվող հարցեր: Ներկայացրել եմ 2018 թվականին ԱՊՀ-ում Մշակույթի տարվան նվիրված միջոցառումների և 2019 թվականի գրքի տարվա շրջանակներում իրականացված միջոցառումները: Ներկայացրել եմ նաև Հայրենական մեծ պատերազմի 75-ամյակի միջոցառումների շրջանակում Հայաստանում նախատեսվող նախագծերը, գործնական

առաջարկություններ եմ ներկայացրել Ուզբեկստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ միասնական վիրտուալ թանգարան ստեղծելու հայտի շրջանակում: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդական մշակութային համաժողովը տեղի կունենա Հայաստանում 2021 թվականին: Ներկայացրել եմ նաև Գորիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք նախագծի շրջանակում իրականացվող միջոցառումները: Առանձին քննարկումներ եմ ունեցել պատվիրակների հետ, այդ թվում՝ երիտասարդական Դելփյան խաղերի տնօրենի հետ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. ԱՊՀ երիտասարդական մշակութային համաժողովի անցկացում 2021 թվականին Հայաստանում
2. Երիտասարդական Դելփյան խաղերին հայ երիտասարդ երաժիշտների մասնակցության խթանում և ապահովում
3. Համագործակցության խթանմանը վերաբերվող առաջարկություններ:

23.09.2019

Արայիկ Խզմալյան